

Հավելված  
ՀՀ կառավարության 2021 թվականի  
մարտի 4-ի N 273-Ա որոշման

Yerevan, 2021

Երևան, 2021 թ.

THE GOVERNMENT OF THE REPUBLIC OF  
ARMENIA  
ACTING ON BEHALF OF THE REPUBLIC OF  
ARMENIA  
(AS THE GOVERNMENT)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ, ՈՐԸ ԳՈՐԾՈՒՄ Է  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԱՆՈՒՆԻՑ  
(ՈՐՊԵՍ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ)

AND

ԵՎ

ARMPower CJSC  
(AS THE DEVELOPER)

«ԱՐՄՓԱՈՒԵՐ» ՓԲԸ-Ն  
(ՈՐՊԵՍ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՈՂ)

AND

ԵՎ

RENCO S.P.A  
(AS THE SPONSOR)

«ՌԵՆԿՈ» Ս.Պ.Ա  
(ՈՐՊԵՍ ՀՈՎԱՆԱՎՈՐ)

AGREEMENT No. 2  
ON MAKING AMENDMENTS  
TO FRAMEWORK AGREEMENT

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ  
ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ  
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ  
ՄԱՍԻՆ

to

Design, Develop, Finance, Construct, Own,  
Operate and Maintain  
a 250MW Gas-Fired  
Combined Cycle Power Plant  
in the territory of Yerevan,  
Republic of Armenia  
(as amended and restated on 13 November 2018 and  
further amended on 14 December 2018)

Հայաստանի Հանրապետությունում՝ Երևան  
քաղաքի տարածքում 250 ՄՎտ գազային  
վառելիքով կոմբինացված ցիկլով  
էլեկտրակայան նախագծելու, զարգացնելու,  
ֆինանսավորելու, կառուցելու,  
սեփականության իրավունքով  
տիրապետելու, գործարկելու և պահպանելու  
վերաբերյալ  
(փոփոխված և վերաշարադրված՝ 2018 թ.-ի  
նոյեմբերի 13-ին և այնուհետև փոփոխված  
2018 թ.-ի դեկտեմբերի 14-ին)

THIS AGREEMENT is made at Yerevan

ՍՈՒՅՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐԸ կնքվել է Երևանում

BETWEEN:

- (1) THE GOVERNMENT OF THE REPUBLIC OF ARMENIA, ACTING ON BEHALF OF THE REPUBLIC OF ARMENIA having its administrative office at Republic Square, Government House 1, 0010 Yerevan, Republic of Armenia, hereinafter referred to as the "**Government**" (which expression shall, unless the context requires otherwise, include its successors and permitted assigns);
- (1) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ, ՈՐԸ ԳՈՐԾՈՒՄ Է ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ և որի վարչական նստավայրը գտնվում է՝ Հայաստանի Հանրապետություն, 0010 Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 1 հասցեում, այսուհետ՝ «**Կառավարություն**» (ինչպիսի արտահայտությունը ներառում է նաև դրա իրավահաջորդներին և թույլատրելի ցեսիոներներին, եթե համատեքստից այլ բան չի բխում),
- (2) ARMPOWER CJSC, a company incorporated and registered in the Republic of Armenia pursuant to Armenian law (with company number 286.120.924562), and having its registered office at Vazgen Sargsyan Street 10, Kentron, 0010 Yerevan, Armenia, hereinafter referred to as the "**Developer**" (which expression shall, unless the context requires otherwise, include its successors and permitted assigns); and
- (2) «ԱՐՄՓԱՈՒԵՐ» ՓԲԸ-ի, Հայաստանի Հանրապետության օրենքների համաձայն Հայաստանի Հանրապետությունում հիմնադրված և գրանցված ընկերության (գրանցման համարը՝ 286.120.924562), որի գտնվելու վայրն է՝ ՀՀ, ք. Երևան, Կենտրոն 0010, Վազգեն Սարգսյանի փող. 10 հասցեն, այսուհետ՝ «**Կառուցապատող**» (ինչպիսի արտահայտությունը ներառում է նաև դրա իրավահաջորդներին և թույլատրելի ցեսիոներներին, եթե համատեքստից այլ բան չի բխում), և
- (3) RENCO S.p.A, a public company incorporated and registered in Italy pursuant to Italian law (with company number 13250670158) and being legally based at Viale Venezia 53, 61121 – Pesaro, Italy, hereinafter referred to as the "**Sponsor**" (which expression shall, unless the context requires
- (3) «ՌԵՆԿՈ» Ս.պ.Ա-ի, Իտալիայի օրենքների համաձայն Իտալիայում հիմնադրված և գրանցված բաց բաժնետիրական ընկերության (գրանցման համարը՝ 13250670158), որի իրավաբանական գտնվելու վայրն է՝ Իտալիա, 61121-Պեզարո, Վիալե Վենեցիա 53, հասցեն, այսուհետ՝ «**Հովանավոր**» (ինչպիսի արտահայ-

otherwise, include its successors and permitted assigns).

տուրքերը ներառում է նաև դրա իրավահաջորդներին և թույլատրելի ցեսիոներներին, եթե համատեքստից այլ բան չի բխում)

## ՄԻՋԵՎ

### WHEREAS:

### ՀԱՇՎԻ ԱՌՆԵԼՈՎ, ՈՐ.

(A) On 27 April 2017 the Parties and the Sponsor have entered into Framework Agreement to Design, Develop, Finance, Construct, Own, Operate and Maintain a 250MW Gas-Fired Combined Cycle Power Plant in the territory of Yerevan, Republic of Armenia, which has been amended and restated on 13 November 2018 and further amended on 14 December 2018 (the “**Framework Agreement**”).

(A) Կողմերը և Հովանավորը 2017 թ.-ի ապրիլի 27-ին կնքել են շրջանակային համաձայնագիր՝ Հայաստանի Հանրապետությունում՝ Երևան քաղաքի տարածքում 250 ՄՎտ գազային վառելիքով կոմբինացված ցիկլով էլեկտրակայան նախագծելու, զարգացնելու, ֆինանսավորելու, կառուցելու, սեփականության իրավունքով տիրապետելու, գործարկելու և պահպանելու վերաբերյալ, որը փոփոխվել և վերաշարադրվել է 2018 թ.-ի նոյեմբերի 13-ին և այնուհետև փոփոխվել է 2018 թ.-ի դեկտեմբերի 14-ին («**Շրջանակային Համաձայնագիր**»):

(B) By written consent of the Parties and the Sponsor, the Conditions Precedent Deadline was extended until 18 February 2019.

(B) Կողմերի և Հովանավորի գրավոր համաձայնությամբ Հետաձգող պայմանների վերջնաժամկետը երկարաձգվել է մինչև 2019 թվականի փետրվարի 18-ը:

(C) Due to reasons, for which neither of the Parties was responsible, by written consent of the Parties and the Sponsor the Financial Close Longstop Date was extended until 14 June 2019.

(C) Ելնելով այնպիսի պատճառներից, որոնց համար Կողմերից որևէ մեկը պատասխանատու չէր, Կողմերի և Հովանավորի գրավոր համաձայնությամբ Ֆինանսավորման ամփոփման ծայրահեղ ամսաթիվը երկարաձգվել է մինչև 2019 թվականի հունիսի 14-ը:

(D) The Project Schedule has been affected by Force Majeure Events, of which the Developer has duly notified the Government.

(D) Ծրագրի ժամանակացույցի վրա ազդել են Անհաղթահարելի ուժի իրադարձություններ, որոնց մասին Կառուցապատողը պատշաճ ծանուցել է Կառավարությանը:

(E) The Parties and the Sponsor have agreed to make amendments to the Framework Agreement to modify the relevant Milestone Dates.

(E) Կողմերը և Հովանավորը համաձայնվել են փոփոխություններ կատարել Շրջանակային Համաձայնագրում՝ համապատասխան Նշանակալից ամսաթվերը փոփոխելու համար:

NOW, IT IS AGREED AS FOLLOWS:

ՍՈՒՅՆՈՎ ՁԵՌՔ Է ԲԵՐՎԵԼ ՀԵՏԵՎՅԱԼ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ.

## ARTICLE 1

## ՀՈԴՎԱԾ 1

### 1 DEFINITIONS

### 1. ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ

1.1. In this Agreement unless the context otherwise requires:

1.1. Սույն Համաձայնագրում, եթե համատեքստից այլ բան չի բխում՝

(a) **“Framework Agreement”** has the meaning given to it in point (A) of the recitals of this Agreement;

(a) **«Շրջանակային Համաձայնագիր»** նշանակում է սույն Համաձայնագրի նախաբանի «A» կետում դրան վերագրված նշանակությունը.

(b) **“Agreement”** means this agreement.

(b) **«Համաձայնագիր»** նշանակում է սույն համաձայնագիրը:

Terms defined in the Framework Agreement (whether directly or by reference) shall, unless otherwise defined herein, have the same meaning in this Agreement.

1.2. Շրջանակային Համաձայնագրում սահմանված եզրույթները (լինի դա ուղղակիորեն, թե՛ հղումով), սույն Համաձայնագրում այլ կերպ սահմանված չլինելու դեպքում, ունեն սույն նշանակությունը սույն Համաձայնագրում:

### 2 AMENDMENTS

### 2. ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

(1) The Parties and the Sponsor acknowledge the extension of the Milestone Dates as specified in clauses B and C of the recitals of this Agreement and agree to amend and read the definitions of terms “Conditions Precedent Deadline” and “Financial Close Longstop Date” in Article 1.3 (Definitions) of the Framework Agreement as follows:

“Conditions Precedent Deadline” means 18 February 2019;

“Financial Close Longstop Date” means 14 June 2019.

(1) Կողմերը և Հովանավորը ճանաչում են Նշանակալից ամսաթվերի երկարաձգումները՝ ըստ սույն Համաձայնագրի նախաբանի «B» և «C» կետերում նշվածի, և համաձայնվում են փոփոխել և վերաշարադրել Շրջանակային Համաձայնագրի 1.3 հոդվածում (Սահմանումներ) «Հետաձգող պայմանների վերջնաժամկետ» և «Ֆինանսավորման ամփոփման ծայրահեղ ամսաթիվ» եզրույթների սահմանումները՝ ըստ հետևյալի.

«Հետաձգող պայմանների վերջնաժամկետ» նշանակում է 2019 թվականի փետրվարի 18-ը.

«Ֆինանսավորման ամփոփման ծայրահեղ ամսաթիվ» նշանակում է 2019 թվականի հունիսի 14-ը:

(2) The Parties and the Sponsor hereby agree to amend and read the definition of term “Scheduled Commercial Operation Date” in Article 1.3 (Definitions) of the Framework Agreement as follows: “Scheduled Commercial Operation Date” means 24 August 2021.

(2) Կողմերը և Հովանավորը սույնով համաձայնվում են փոփոխել և վերաշարադրել Շրջանակային Համաձայնագրի 1.3 հոդվածում (Սահմանումներ) «Նախատեսված կոմերցիոն շահագործման ամսաթիվ» եզրույթի սահմանումը՝ ըստ հետևյալի. «Նախատեսված կոմերցիոն շահագործման ամսաթիվ» նշանակում է 2021 թվականի օգոստոսի 24-ը:

**3 INCORPORATION BY REFERENCE**

**3. ՆԵՐԱՌՈՒՄՆԵՐ ՀՂՄԱՄԲ**

Articles 18.3(b)-(h) (Arbitration), 19 (Representations and Warranties), 20.1 (Notices), 20.3 (Invalidity), 20.7 (Variation), 20.9 (Entire Agreement), 20.11 (Sovereign Immunity), 20.12 (Further assurance), 20.14 (Governing law), 20.15 (Contract Language) of Framework Agreement shall be deemed incorporated in this Agreement by reference and shall apply as if the references therein to "the Agreement", "this Agreement" or "the present contract" were references to this Agreement.

Շրջանակային Համաձայնագրի հոդվածներ 18.3(b)-(h)-ն (Արբիտրաժ), 19-ը (Հավաստումներ և Երաշխավորումներ), 20.1-ը (Ծանուցումներ), 20.3-ը (Անվավերություն), 20.7-ը (Փոփոխություն), 20.9-ը (Ամբողջական պայմանագիր), 20.11-ը (Ինքնիշխան անձեռնմխելիությունը), 20.12-ը (Լրացուցիչ երաշխիքներ), 20.14-ը (Կարգավորող իրավունքը), 20.15-ը (Համաձայնագրի Լեզուն) համարվում սույն Համաձայնագրում ներառված հղումով և կիրառվում են այնպես, ինչպես եթե դրանցում հղումները «Համաձայնագրին» կամ «սույն Համաձայնագրին» վերաբերեին սույն Համաձայնագրին:

**4 MISCELLANEOUS PROVISIONS**

**4. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

This Agreement shall come into effect upon being executed by the Parties and the Sponsor and shall comprise an integral part of the Framework Agreement.

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի և Հովանավորի կողմից ստորագրելու պահից և հանդիսանում է Շրջանակային Համաձայնագրի անբաժանելի մասը:

IN WITNESS WHEREOF, the Parties and the Sponsor, intending to be legally bound, have caused this Agreement to be duly executed on the dates indicated next to their signatures below by their duly authorised representatives:

**Ի ՀԱՍՏԱՏՈՒՄՆ ՎԵՐՈԳՐՅԱԼԻ՝** Կողմերը և Հովանավորը, մտադրված լինելով իրավաբանորեն պարտավորվել, ապահովեցին սույն Համաձայնագրի պատշաճ ստորագրումն իրենց պատշաճ լիազորված ներկայացուցիչների միջոցով՝ ստորև դրված ստորագրությունների կողքին նշված ամսաթվերին.

[Signature pages follow]

[Ստորագրման էջերը՝ հաջորդիվ]

SIGNED by the GOVERNMENT OF USՈՐԱԳՐՎԵԼ Է ՀԱՅԱՍՏԱՆԻ  
THE REPUBLIC OF ARMENIA (acting ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
on behalf of the REPUBLIC OF ԿՈՂՄԻՑ (որը գործում է ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ARMENIA) ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ անունից)

By: Suren Papikyan, Minister of Territorial Administration and Infrastructure of the  
Republic of Armenia, as its authorised representative  
Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և  
ենթակառուցվածքների նախարար Սուրեն Պապիկյանի կողմից՝ որպես  
լիազորված ներկայացուցիչ

Signature:  
Ստորագրություն.

Date:  
Ամսաթիվ.

SIGNED by ARMPower CJSC

ՍՏՈՐԱԳՐՎԵԼ Է «ԱՐՄՓԱՈՒԵՐ» ՓԲԸ-Ի  
ԿՈՂՄԻՑ

By:

\_\_\_\_\_

as its authorised representative

կողմից՝ որպես լիազորված  
ներկայացուցիչ

Signature:

Ստորագրություն.

Date:

Ամսաթիվ.

SIGNED by RENCO S.p.A

ՍՏՈՐԱԳՐՎԵԼ Է «ՌԵՆԿՈ» Ս.Պ.Ա.Ի ԿՈՂՄԻՑ

By:

as its authorised representative

կողմից՝ որպես լիազորված  
ներկայացուցիչ

\_\_\_\_\_

Signature:

Date:

Ստորագրություն.

Ամսաթիվ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ  
ՂԵԿԱՎԱՐ

Ա. ԹՈՐՈՍՅԱՆ